

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժին
/01.01.2015թ.-30.12.2015թ./

2015թ. ընթացքում մարզպետի կողմից


- ընդունվել է 404 որոշում,
- արձակվել է 338 կարգադրություն:

Մարզպետի որոշումները վերաբերում են հետևյալ հարցերին.

• ՏԻՄ	7	1.73%
• քաղաքաշինություն	3	0.74%
• առողջապահություն և սոց. Ապահովություն	89	22.02%
• կադրային հարցեր	41	10.15%
• կրթություն, մշակույթ և սպորտ	82	20.3%
• բնակարանի մասնավորեցում	8	0.98%
• հողօգտագործում	2	0.5%
• ֆինանսական հարցեր	115	28.5%
• տրանսպորտ	4	1%
• ԱԻ և ՔՊ	9	2.22%
• զորակոչ	4	1%
• գաղտնի	9	2.22%
• վարչական հսկողություն	3	0.74%
• այլ	28	6.9%


Ընդունված որոշումներից 2-ը նորմատիվ են և առնչվում են առողջապահական ոլորտին:

Դրանցից 1-ը առողջապահության նախարարի հետ համատեղ ընդունած որոշում է: Երկու որոշումներով էլ տարիքային սահմանափակում է դրվել առողջապահական ընկերությունների տնօրենների ընտրության մրցույթի մասնակիցների համար, ինչպես նաև լրացում է կատարվել մրցույթի անցկացման կարգի մեջ: Այդ որոշումներն են. ՀՀ Լոռու մարզպետի 16.04.2015թ. թիվ 124-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 17.06.2015թ. N 31-Ն հրամանը և ՀՀ Լոռու մարզպետի 10.07.2015թ. N 195-Ն համատեղ որոշումը:



Մարզպետի կարգադրությունները վերաբերում են հետևյալ հարցերին.

• կադրային հարցեր	275	81.3%
• քաղաքաշինություն	1	0.3%
• ֆինանսական հարցեր	5	1.5%
• առողջապահություն և սոց. ապահովություն	15	4.4%
• կրթություն	7	2.1%
• գյուղատնտեսություն և բնապահպանություն	2	0.6%
• մշակույթ և սպորտ	3	0.9%
• զորակոչի հետ կապված հարցեր, ՔՊ և ԱԻ	2	0.6%
• այլ	28	8.3%



Մշտապես իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն, խմբագրման աշխատանքներ, համարակալում, գրանցում գրանցամատյաններում և էլեկտրոնային առաքում շահագրգիռ ստորաբաժանումներին: Մարզպետի որոշումների և կարգադրությունների պատճենները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից 2015թ. ընթացքում արձակվել է 361 հրաման՝ հիմնականում կադրային հարցերի վերաբերյալ:

2015թ. ընթացքում մարզպետի նախաձեռնությամբ կազմվել է վարչական վարույթի գործ ներմարզային սպասարկման ժամկետը լրացած և թափուր երթուղիները փոխադրողներին հատկացնելու մրցույթի հաղթողներ ճանաչելու վերաբերյալ:

2015թ. ընթացքում «Գումարի բռնագանձման պահանջի մասին» հայցադիմումներ են ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Լուսաղբյուր և Շնող համայնքների ղեկավարների՝ ՀՀ կառավարության կողմից 04.08.2011թ. N 1062-Ն որոշմամբ մարզին հատկացված առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուի դիմաց մարզպետի և համայնքի ղեկավարի միջև կնքված փոխառության պայմանագրով սահմանված ժամկետում վերադարձման ենթակա գումարի բռնագանձման նպատակով:

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Ստեփանյանի դեմ Լոռու մարզպետարանը հայց է ներկայացրել հետադարձ պահանջի իրավունքով գումարի բռնագանձման պահանջի մասին, որը բավարարվել է և վճիռն ստացել է օրինական ուժ: Վերադարձման ենթակա գումարը կազմում է 7183525 դրամ: Ներկայումս գործը գտնվում է քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանում: Այն առաջին ատյան վերադարձնելուն պես կպահանջվի կատարողական թերթ և կներկայացվի ԴԱՀԿ:

2015թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն Լոռու մարզի 39 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն, որի արդյունքում կազմվել են ակտեր: Կազմված ակտերը քննարկվել են փոխմարզպետների մոտ և հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են մեթոդական ցուցումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն:

Համայնքներում իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական խախտումները.

1. Բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով կուտակվել են հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր ապառքներ /Խախտվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2.1 կետի պահանջը/:

2. Բյուջեի կատարման եռամսյակային հաղորդումները որոշ դեպքերում չեն ներկայացվում ավագանուն կամ ներկայացվում են ուշացումներով /Խախտվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ի 1-ին կետի, հոդված 69-ի առաջին մասի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 35-ի 1-ին կետի պահանջը/:

3. Հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ չեն իրականացվում /Խախտվում է «ՏԻՄ» ՀՀ օրենքի հոդված 54.1-ի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը «...մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 հոդվածով սահմանված ժամկետում:

4. Չի հաստատվում գնումների պլանը և չեն ձեռնարկվում միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանած կարգով այն հրապարակելու համար /Խախտվել է գնումների գործընթացի կազմակերպման մասին ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 21-րդ կետի պահանջը/:

Այս խախտումն առկա է գրեթե բոլոր գյուղական համայնքներում:

5. Որոշ համայնքներում դրամարկղի գիրքը կնքված և համարակալված չէ տարածքային հարկային տեսչության կողմից:

6. Համայնքներում մրցութային հանձնաժողովները ստեղծվում են առանց մարզպետարանի ներկայացուցչի՝ չպահպանելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետի պահանջները:

7. Համայնքային սեփականության արոտավայրերը տրամադրվում են վարձակալության առանց համայնքի ավագանու հետ համաձայնեցնելու: Խախտվում է ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը:

8. Համայնքներում հողային հաշվեկշռի տեքստային մասը չեն կազմում: Խախտվում է ՀՀ կառավարության 23.10.2000թ. N 656 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետը, համաձայն որի հողային հաշվեկշիռը բաղկացած է տեքստից և աղյուսակներից: Խախտվում է նաև նույն որոշման 12-րդ կետը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության

կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները, իսկ համայնքներում համապատասխան գրքերում հաստատված տվյալները չեն լրացվում:

Խախտումն արձանագրվել է գրեթե բոլոր համայնքներում:

9. Չի պահպանվում Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը /ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշում/: Քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար ճարտարապետա-հատակագծային առաջադրանք չի տրամադրվում:

10. Չեն պահպանվում ՀՀ կառավարության 28.10.2010թ. «Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը հաստատելու մասին» թիվ 1477-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները:

Համայնքային սեփականության արտավայրերը օգտագործվում են համայնքի անասնատերերի կողմից առանց համապատասխան պայմանագրերի:

11. Չի պահպանվում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի (ավագանու անդամի պարտականությունները) 4-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանու անդամը պարտավոր է չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների (ծնող, քույր, եղբայր, երեխա) շահերին:

12. Համայնքային սեփականություն հանդիսացող վարելահողերը տրվում են վարձակալության առանց մրցույթի՝ խախտելով ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետը:

2016թ. ընթացքում նախատեսվում է վարչական հսկողություն իրականացնել մարզի 37 համայնքներում:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել է շուրջ 150 քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում՝ իրավական խորհրդատվություն:

Յուրաքանչյուր աշխատանքային տարվա ավարտից հետո արխիվացվում են մարզպետի և աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտերի թղթային տարբերակները և հանձնվում մարզպետարանի արխիվ՝ մշտական պահպանության:

Մշտապես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը տրամադրվում է տեղեկատվություն մարզպետարանի կայքում տեղադրելու համար /մարզպետի որոշումներ և կարգադրություններ, համայնքների ավագանիների որոշումներ, վարչական հսկողության արդյունքում լրացված հարցաշարեր և կազմված արձանագրություններ, վճիռներ, այլ տեղեկատվություն/:

Բաժնի կողմից կատարվել է նաև մարզի համայնքներից մարզպետարան ներկայացված իրավական ակտերի՝ համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների և ավագանիների որոշումների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ստուգում: